

Աւդեռձներ.

ՎԵՀԱՓԱԾՈՒՅԹԻ ՏԵՇԻ

Լազարեան ձեմարանն արենելեան լիզուաց որպէս մեր ժամանակի հնագոյն կրթական հիմնարկութիւն Հայոց մէջ, պարտք է համարում ողջունել Զերդ Սրբութիւնը և ի գէմս Զեր ամրող հայ ազգին տառերի գիւտի 1500-ամեակի և տպագրութեան 400-ամեակի նշանաւոր օրին:

Մասնակցել լուսաւորութեան այդ մեծ տօնին՝ նշանակում է ճանաչել ո. Սահակի և ո. Մեսրոպ Մաշտոցի երախափքը ազգի և մարդկութեան առաջ Պարաքի և գաղափարի այդ առաքեաները, աւարով ազգին գիր ու դպրութիւն, հազորգակից արին նրան աւելի վսիմ քաղաքակրթութեան քրիստոնէական եկեղեցու հովանու տակէ Մեսրոպի զիւտը բացեց հայի դարերով կապուած լեզուն, արթ-նացրեց նրա ստեղծագործական ուժերը:

Այս վսիմ գործին պսակ հանդիսացաւ ԽVI դարում հայ տպագրութեան արուեստը, որ միջոց տուեց ժողովրդի լայն խաւերին հազորդ լինելու զիւտութեան, դրականութեան և գեղարուեստի բարիներին:

Հանդէս եկաւ մի փայլուն կուճառ մատենադիրների, որոնք ճոխացրին մայրենի լիզուն և գրականութիւնը: Մեսրոպի համար չելի դիւտը հսաբաւորութիւն տուեց հայ ազգին կատարել մի վեհ առափելութիւն՝ քաղաքակրթութեան և քրիստոնէական լուսոց հաշորդիչ հանդիսանալ առաջաւոր Ասիայում:

Պահպանելով իր մեծ հիմնադիրների աւանդներն և աշխատելով հայ ազգի լուսաւորութեան նոյն անդաստանում, Լազարեան ձեմարանն իր այդ սպասաւորութեամբ հանդիսանում է իրեն շարունակող այն մշակների գործի, որոնք 1500 տարի առաջ վառ-սեցին Հայոց մէջ Սրբազն հուրը, իսկ ԽVI դարում նոյնը փայլեցրին հայ ժողովրդի բոլոր չքաններում:

Այս զիւտակցութեամբ Լազարեան ձեմարանը այն նշանաւոր տօնին միացնում է իր ձայնը հոչակելու որպէս ո. Սահակի և ո. Սահակի և ո. Մեսրոպի նոյնակս և առաջին հայ տպագրիչների վաստակները եկեղեցու և դրականութեան առաջ և մաղթում հայ ազգին լիակատար արտայայտութիւն իր հողերը ոյժերի և բարգաւաճում իր ապաղայ քաղաքակրթական աշխատանքի մէջ:

Վերատեսուչ Պահել Գիրութիւնով.

Տիկնութեան Կ. Կոստանեանց

№ 2622

ի 5 հոկտեմբերի 1913 ամի.

ի Մոսկովի: